ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ /հունվար-հուլիս/

ՀՀ 2022 թ. պետական բյուջեի ծախսերի կազմը, հունվար-հուլիս/մլրդ դրամ/







Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր (կապիտալ ծախսեր), հունվար-հուլիս, մլրդ դրամ



ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի ծախսերն հունվար-հուլիսին կազմել են 1 տրիլիոն 94.7 մլրդ դրամ, որն ինն ամիսների ճշտված ցուցանիշի 65.2 %-ն է: Ընդ որում, փաստացի բյուջետային ծախսերի՝

- 31.7 %-ը կամ 347.1 մլրդ դրամը տրամադրվել է սոցիալական պաշտպանության ոլորտին, որը կազմում է ոլորտի ինն ամիսների ճշտված ցուցանիշի 76.9 %-ը,
- 18.9 %-ը կամ 206.9 մլրդ դրամը տրամադրվել են ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին: Այն կազմում է ոլորտի ինն ամիսների ճշտված ցուցանիշի 68.3 %-ը,
- 16.6 %-ը կամ 181.5 մլրդ դրամը տրամադրվել է պաշտպանության բնագավառին, որը կազմում է ինն ամիսների ճշտված ցուցանիշի 60 %-ը,
- 9.1 %-ը կամ 99.5 մլրդ դրամը տրամադրվել է հասարակական կարգ,անվտանգություն և դատական գործունեություն բնագավառին, որն ինն ամիսների ճշտված ցուցանիշի 68.2 %-ն է,
- 8.7 %-ը կամ 95.5 մլրդ դրամը տրամադրվել է կրթությանը: Կատարողականը ինն ամսվա ճշտված ծրագրի նկատմամբ կազմում է 70.9 %,
- 6.5 %-ը կամ 71 մլրդ դրամը տրամադրվել է առողջապահությանը, որը կազմում է ոլորտի ինն ամսվա ճշտված ցուցանիշի 71.2 %-ը,
- 6.1%-ը կամ 67.3 մլրդ դրամը տրամադրվել է տնտեսական հարաբերություններ բնագավառին: Կատարողականը ինն ամսվա ճշտված ծրագրի նկատմամբ կազմում է 35.4 %,
- 1.7 %-ը կամ 18.9 մլրդ դրամը տրամադրվել է հանգիստ, մշակույթ և կրոն բնագավառներին, որն ինն ամսվա ճշտված ցուցանիշի 70.1 %-ն է,
- 0.4 %-ը կամ 3.9 մլրդ դրամը տրամադրվել է բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ բնագավառին, որը կազմում է ոլորտի ինն ամսվա ճշտված ցուցանիշի 32.1 %-ը,
- շուրջ 0.3 %-ը կամ 3 մլրդ դրամը տրամադրվել է շրջակա միջավայրի պաշտպանությանը, որը կազմում է ոլորտի ինն ամսվա ճշտված ցուցանիշի 39.8 %-ը:

Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը (կապիտալ ծախսերը) հունվար-հուլիս ամիսներին կազմել են 119.1 մլրդ դրամ, որը կազմում է ինն ամսվա ճշտված ցուցանիշի 39.8 %-ը:

* Տեղեկատվության աղբյուր է հանդիսացել ՀՀ ֆինանսների նախարարության <<LS Rep>> համակարգը /19.08.2022թ. դրությամբ/